



Արարայան դաշտի խոր- ֆային ջրային ռեսուրսների օգտագործվող ծավալների ամրագրումը հիմնական նպատակ

Բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանն աշխատանքային այցով եղել է ՀՀ Արարատի մարզում: Նախարարը, նրան ուղեկցող աշխատանքային խումբը, որի կազմում եղել է նաև Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարը, ԱՄՆ ՄԶԳ «Գիտական առաջադեմ տեխնոլոգիաների օգտագործում և համագործակցություն» (ԳԱՏՕ) ծրագրի մասնագետները հետևել են Արարատյան դաշտի ստորերկրյա ջրային ռեսուրսների խնայողությանն ուղղված միջոցառումների ընթացքին, ծանոթացել դրանց իրականացման արդյունքում արձանագրված դրական տեղաշարժերին: Աշխատանքային խմբի առաջին կանգառն եղել է Սայաթ-Նովա համայնքում, որտեղ հետևել է «Գոլդն Ֆիշ-Կ» ՍՊԸ (նախկին՝ «Յունիֆիշ» ՍՊԸ) ձկնաբուծական տնտեսության խորքային հորի չափաբերման, փականային ռեժիմի բերման և կապարակնքման աշխատանքների ընթացքին: Հայանիստ համայնքում նախարարին է ներկայացվել ԱՄՆ ՄԶԳ «Գիտական առաջադեմ տեխնոլոգիաների օգ-

տագործում և համագործակցություն» (ԳԱՏՕ) ծրագրի շրջանակներում ձկնաբուծարանից հեռացվող ջուրը ոռոգման նպատակով օգտագործելու համար կառուցված պոմպակայանի աշխատանքները և պիլոտային ծրագրի իրականացման արդյունքները: Ծրագրի մասնագետները հայտնել են, որ պոմպակայանի շահագործման արդեն առաջին տարում ոռոգվել է 40 հա տարածք, որը նախկինում հնարավոր չի եղել ոռոգել: Պոմպակայանի ջրերով հնարավոր է ոռոգել 80 հա հողատարածք, ինչը կարվի արդեն հաջորդ տարի: Ձկնաբուծարանի հետադարձ ջրերի որակը ստուգվել է երկու անգամ՝ ծրագրի նախագծման փուլում (2016թ. փետրվար) և նախքան ոռոգման շրջանը (2017թ. ապրիլ): Նմուշները ստուգվել են 38 չափանիշներով, ներառյալ՝ հիմնական ֆիզիկական և քիմիական պարամետրերը և ծանր մետաղները: Ստացված արդյունքները համեմատվել են ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) կողմից ոռոգման ջրի համար սահմանված ցուցանիշների հետ: Ստուգումներ են կատարվել նաև ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության լաբորատորիայում պտուղ-բանջարեղենային մթերքների համար սահմանված հիմնական ցուցանիշներով:

• Արարայան դաշտի խորքային ջրային ռեսուրսների օգտագործվող ծավալների ամրագրումը հիմնական նոյասակ:

Սկիզբը էջ 1 /



Համաձայն տրված եզրակացության, սեփի ու ծմերուկի փորձարկված նմուշները համապատասխանում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված սննդի անվտանգության նորմերին: Ըստ նախարարի, եթե ձկնաբուծարանների օգտագործած ջուրը նաև ոռոգման նպատակով երկրորդային օգտագործվի, ապա կխնայվի 70 մլն մ³ ջուր, որը յուրաքանչյուր տարի բաց է թողնվում Սևանա լճից Արարատյան դաշտի գյուղատնտեսական հողերը ոռոգելու նպատակով: Արարատի մարզի Սիփանիկ համայնքում Բնապահպանության նախարարի գլխավորած պատվիրակությունը ծանոթացել է ԳԱՏՕ ծրագրի կողմից 2017թ. իրականացված մեկ խորքային հորի լուծարման աշխատանքների արդյունքներին, ինչով տարեկան խնայվել է 1.9 մլն մ³ ջուր և չորացվել է դեռևս 1970 ական թվականներից գործող վթարային հորի շուրջ ձևավորված ճահճուտը: Նախարարը ծանոթացել է նույն համայնքում գործող «Ինտեր ակվա» ՍՊԸ ձկնաբուծական տնտեսությունում գործածվող ջրախնայող նորագույն տեխնոլոգիաներին: Ա. Մինասյանը նկատել է, որ ջրի օգտագործման կիսափակ այդ համակարգը, խորքային ջրերի խնայողությանն ուղղված միջոցառումներից մեկն է, ինչը թույլ է տալից ընդերքից վերցված միավոր ջրով ավելի շատ ձուկ աճեցնել՝ բացառելով արտադրության աճի համար լրացուցիչ ջրառը:

Պատասխանելով Արարատյան դաշտի ստորերկրյա ջրային ռեսուրսների խնայողության ուղղությամբ գերատեսչության կատարած այլ քայլերի վերաբերյալ լրագրողների հնչեցրած հարցերին՝ նախարարը նշել է, որ խնդիր է դրված հստակ ամրագրել Արարատյան դաշտի խորքային ջրային ռեսուրսների օգտագործվող ծավալները: Գնտղական կարիք ունի նաև «Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքով սահմանված Արարատյան դաշտի 1100,0 մլն մա /տարի վերականգնվող ստորերկրյա ջրային ռեսուրսների ծավալը, քանի որ այն դեռևս խորհրդային տարիներին իրականացված ուսումնասիրությունների արդյունք է: Այդ խնդիրները լուծելու նպատակով շրջակա միջավայրի պահպանության ոլորտում լիազոր գերատեսչությունն իրականացնում է գործնական քայլեր՝ ներգրավում դրամաշնորհային միջոցներ: Այդ նպատակով բոլոր ձկնաբուծական տնտեսություններում առաջիկայում կներդրվի ավտոմատ կառավարման հոսքաչափական

համակարգ: Այն յուրաքանչյուր ցանկացողի հնարավորություն կտա առցանց հետևել ձկնաբուծարանների կողմից՝ այդ պահին օգտագործվող ջրի ծավալներին: Համակարգը կոյուրինացնի հատկապես Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի վերահսկողական գործառույթի իրականացումը:

Ա. Մինասյանը հայտնել է, որ ավտոմատ կառավարման հոսքաչափեր առաջիկայում տեղադրվելու են 4 խոշոր՝ «Մաքս ֆիշ», «Ինտեռ Ակվա», «Գոլդ Ֆիշ-Կ» և «Ալեքս հոլդինգ» ձկնաբուծական տնտեսություններում և նախատեսվում է մինչև 2019 թվականի ավարտը համակարգի մեջ ներառել բոլոր տնտեսությունները: Հոսքաչափերի ներկրման ոլորտում բացառվելու է մենաշնորհը և ներկրող ընկերությունները պետք է պատասխանատվություն կրեն թե՛ տեղադրման, թե՛ հետագայում սպասարկման ծառայությունների համար: Հոսքաչափերը տեղադրվելու են պետության կողմից և տնտեսավարողների ցանկությամբ դրանք կարող են ձեռք բերվել սեփական միջոցներով՝ հետագայում ներդրած գումարը պետությանը փոխանցվող իրենց շահութահարկից հետ ստանալու պայմանով:

Տեղեկանք

2016թ. մարտ-հոկտեմբեր ամիսներին ԱՄՆ ՄԶԳ «Գիտական առաջադեմ տեխնոլոգիաների օգտագործում և համագործակցություն հանուն ռեսուրսների համալիր պահպանության» (ԳԱՏՕ) ծրագրի շրջանակներում իրականացված գույքագրման և հաշվառման տվյալների համաձայն Արարատյան դաշտում ջրառը կազմել է շուրջ 1.67 մլրդ մ³/տարի, մինչդեռ «Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի համաձայն, Արարատյան դաշտի վերականգնվող ստորերկրյա ջրային ռեսուրսները կազմում են 1100,0 մլն մ³/տարի:

Գույքագրումից հետո առ այսօր Արարատյան դաշտում իրականացվել է 2 խորքային հորի լուծարում՝ արդյունքում խնայվել է 70 լ/վրկ ջրաքանակ, «Զվարթնոց ավիաօդերևութաբանական կենտրոն» ՓԲԸ-ի տարածքում կոնսերվացվել է 2 խորքային հոր՝ ընկերության սեփական միջոցներով, ինչպես նաև խորքային 127 հորեր բերվել է փականային ռեժիմի:

շարունակությունը էջ 3 /

• Արարայան դաճի խորհային ջրային ռեսուրսների օգտագործվող ծավալների ամրագրումը հիմնական նոսրացում:

Սկիզբը էջ 2 /

Ընդամենը խնայվել է 6363.0 լ/վրկ ջրաքանակ, ինչը տարեկան կազմում է 200.6 մլն.մ³: Համեմատական անցկացնելով, նկատենք, որ համաձայն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի՝ 2016 թվականին փաստացի «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից օգտագործված ջրածավալը Երևանում և 30 գյուղական համայնքներում միասին կազմել է 260.3 մլն մ³/տարի:

ՀՀ բնապահպանության նախարարի 2017թ. հունիսի 25-ի N716-Ա հրամանի համաձայն, 2017թ. սեպտեմբերի 25-ից մինչև նոյեմբերի 30-ը ներառյալ, Արարատյան դաշտի ձկնաբուծական տնտեսություններում իրականացվում են ջրային ռեսուրսների պահպանության նկատմամբ ուսումնասիրություններ՝ ջրաչափում, խորքային հորերի փականային ռեժիմի բերում, կապարակնքում:

Նշված հրամանի համաձայն՝ 2017թ. սեպտեմբերի 25-ից մինչև հոկտեմբերի 23-ն ընկած ժամանակահատվածում իրականացվել են ուսումնասիրություններ շուրջ 82 ձկնաբուծական տնտեսություններում, կազմվել են 64 ջրաչափական, 40 կապարակնքման ակտեր, 5 խորքային հորի փականների կնիքների բացակայության վերաբերյալ 1 ակտ, 102 հոր կապարակնքվել է, 2 հոր ենթակա է լուծարման, 22 հոր ենթակա է կոնսերվացման, 17 ջրօգտագործող չի գործում, ռեժիմային դիտարկումներ իրականացնելու համար կնքվել է 18 նոր պայմանագիր, 82 ձկնաբուծական տնտեսությունների 219 խորքային հորից փաստացի ծախսը կազմում է մոտ 13461.7 լ/վրկ, ՋԹ-ով 13827.0 լ/վրկ, խնայվել է մոտ 283.0 լ/վրկ ջրաքանակ:

Արջերի դահողանությունը ամենաբարձր մակարդակով



Հոկտեմբերի 31-ին ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը հանդիպում է ունեցել ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան Ջուդիթ Սարգսյանի հետ: Հանդիպմանը մասնակցել է նախարարության ղեկավար անձնակազմը, ՀՀ ԲՆ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարը: Նախարարը ողջունել է դեսպանին, նշել, որ շատ կարևոր և ապագային միտված հանդիպում է, որը համագործակցության նոր հեռանկարներ կարող է բացել: Հանդիպման հիմնական թեման վայրի կենդանիների, մասնավորապես, կովկասյան գորշ արջերի անազատության մեջ գտնվելու և կենդանիների պահպանության խնդիրներն էին: Մինչ այդ հարցին անդրադառնալով, նախարարը հանգամանալից ներկայացրել է նախարարության գործառնությունները, շրջակա միջավայրի պահպանության գործում նախարարության որդեգրած քաղաքականությունը, ինչպես նաև՝ իրականացվող և նախատեսվող կառուցվածքային բարեփոխումները, խոսել համագործակցության իրական հնարավորությունների մասին, ինչը հնարավորություն կտա լավագույնս իրականացնել կենդանական և բուսական աշխարհի պատշաճ պահպանու-

թյունը: Նախարարն անդրադարձել է արդեն այսօր իրականացված հատուկ գործողությանը, որով տրվել է մեկնարկը մի ծրագրի, ինչը հնարավորություն կտա անազատության մեջ պահվող արջերին համապատասխան փրկարար և վերականգնողական կենտրոն տեղափոխել: Արծվիկ Մինասյանը նշել է, որ բոլոր գործողություններն իրականացվելու են հրապարակային, թափանցիկ և հաշվետվողականության հիման վրա: Կարևորելով Հայաստանի կենսաբազմազանության պահպանությունը՝ նախարարը շեշտել է, որ հետեւողականորեն իրականացվելու են բոլոր աշխատանքները՝ անազատության մեջ պահվող կենդանիների հայտնաբերումից մինչև կենդանիների Կովկասյան կենսաբազմազանության ապաստարան տեղափոխելն ու համապատասխան միջավայրում բնակեցումը: Միաժամանակ, նախարարը շեշտել է, որ ՀՀ բնապահպանության նախարարությունը դեմ է այդ կենդանիների արտահանմանը, քանի որ անհնար է հայկական բնաշխարհի կենսաբազմազանությունը պատկերացնել առանց դրանց: Դեսպան Ֆարնուրթը ողջունել է նախարարության կողմից իրականացվող քայլերը, այնուհետև նշել, որ թեև Բրիտանիայում արջեր չկան, սակայն կան դրանց ճակատագրով մտահոգ քաղաքացիներ և ուրախությամբ ողջունում է կարևոր նախաձեռնության մեկնարկը, որում նաև բրիտանական կազմակերպությունն ունի իր ներդրումը: Անդրադառնալով անազատության մեջ պահվող արջերի վերաբերյալ հրապարակումներին, դեսպանը նշել է, որ ուրախությամբ արձանագրում է այդ հրապարակման դրական արձագանքը և ողջունել է բնապահպանության նախարարության կողմից իրականացվող քայլերը: Հանդիպմանը կողմերը քննարկել են նաև համագործակցության հնարավորությունները, համապատասխան տեղեկատվության փոխանցման պատրաստակամություն են հայտնել ու ևս մեկ անգամ կարևորել փոխգործակցված աշխատանքը, որը կարող է օրինակելի դառնալ:

«Արջանոց» ռեսուրանային համալիրի երկու արջերին տեղափոխել են Ուրցաձորի Կովկասյան կենսաբազմազանության ադասարան



Արտերկրի լրատվամիջոցներում Հոկտեմբերի 23-ին հոդված էր հրապարակվել Հրազդանի կիրճում գտնվող «Արջանոց» ռեստորանային համալիրի տարածքում պահվող երկու արջերի վերաբերյալ: Հոկտեմբերի 24-ին ՀՀ ԲՆ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի հանձնարարությամբ Երևանի տարածքային ստորաբաժանման աշխատակիցների կատարած շրջայցի արդյունքում պարզվել էր, որ արջերի վանդակի չափերը չեն համապատասխանում ՀՀ կառավարության 26.06.2009թ. «Անազատ և կիսաանազատ պայմաններում վայրի կենդանիների, այդ թվում՝ ՀՀ կարմիր գրքում գրանցված կենդանիներին պահելու և օգտագործելու կարգը սահմանելու մասին» թիվ 725-Ն որոշմամբ հաստատված պահանջներին: Բացատրական աշխատանքների արդյունքում «Արջանոց» ռեստորանային համալիրի տնօրինությունը պատրաստակամություն էր հայտնել արջերին տրամադրել վայրի կենդանիների խնամքի և պահպանման մեջ մասնագիտացված կազմակերպություններին: Հոկտեմբերի 31-ին ՀՀ բնապահպանության և արտակարգ իրավիճակների նախարարության, Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմ-

նի աշխատակիցների աջակցությամբ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանության հիմնադրամի անդամների, Երևանի կենդանաբանական այգու մասնագետների հետ համատեղ կազմակերպել են արջերի տեղափոխումն Ուրցաձորի Կովկասյան կենսաբազմազանության ապաստարան: Նոյեմբերի 1-ին ՀՀ Արարատի մարզի Ուրցաձոր համայնքում տեղի ունեցավ ՀՀ բնապահպանության նախարարության հովանու ներքո ՎիվաՍել-ՍՍՍ-ի, Կենդանիների փրկության միջազգային կազմակերպության (IAR), Ամստերդամի «Արտիս» թագավորական կենդանաբանական այգու համատեղ ջանքերով արջերի փրկարար և վերականգնողական կենտրոնի բացման պաշտոնական արարողությունը և գորշ արջերի փրկության նախաձեռնության մեկնարկը: Կենդանաբանական այգու մասնագետներն արջերին քնեցրել են, քնած վիճակում պատվաստման ենթարկել և անհարմար կառուցված վանդակից առանց բարդությունների տեղափոխել կենդանիների նորակառույց ապաստարան: Կից նյութով ներկայացնում ենք նաև նշված հոդվածը:

Հայաստանի ռեսուրաններից մեկի սարածում 10 սարի վանդակի մեջ ղախվող Միշա և Դաշա արջերն ազատ են արձակվել. The Daily Mail



Բրիտանական The Daily Mail պարբերականը կրկին անդրադարձել է Հայաստանի ռեստորաններից մեկի տարածքում 10 տարի ժանգոտած վանդակներում պահվող հյուծված արջերի պատմությանը՝ տեղեկացնելով, որ կենդանիներն արդեն ազատ են արձակվել: Աղբյուրը հիշեցնում է, որ Միշա և Դաշա մականուններով գիշատիչներն ապրում էին կիսով չափ ջրի մեջ ընկղմված վանդակներում ու սովալլուկ հայացքներով հետևում էին ռեստորանում ընթրողներին՝ ակնկալելով նրանցից մի պատառ ուտելիք ստանալ: The Daily Mail-ը նշում է, որ իր կողմից այս պատմության լուսաբանումից հետո, պարբերականի ընթերցողների նվիրատվությամբ մի քանի հազար ֆունտ ստերլինգ է հավաքվել: Այդ գումարի միջոցով արջերն ազատ են արձակվել:

շարունակությունը էջ 5 /

• Հայաստանի ռեսուրսներից մեկի սարածում 10 սահ վանդակի մեջ դառնալու Միշա և Դաշա արջերն ազատ են արձակվել. The Daily Mail

Սկզբը էջ 4 /



Ներկայացված ֆոտոշարքում երևում է՝ ինչպես են մասնագետները կտրում վանդակի ճաղերը, ինչից հետո հայ և բրիտանացի փրկարարները տանջված արջերին տեղափոխել են նոր, լեռնային գոտում գտնվող ավելի ընդարձակ արգելավանդակ, որտեղ կենդանիները մնալու են մինչև իրենց կյանքի վերջ: Պարբերականը նկատում է, որ նոր տանն արջերն այլևս ստիպված չեն լինի ողորմություն խնդրել մարդկանցից: Նշվում է, որ կենդանիների փրկության գործում մեծ դերակատարում է ունեցել Կենդանիների փրկության միջազգային բարեգործական հիմնադրամը, որն այժմ հատուկ ծրագիր (The Great Bear Rescue) է սկսում՝ մտադրություն ունենալով փրկել

Հայաստանում զվարճանքի համար վանդակներում պահվող տասնյակ արջերի: Ընդհանուր առմամբ, հիմնադրամը մտադիր է առաջիկա մի քանի ամսվա ընթացքում Հայաստանում դժոխային պայմաններում ապրող մոտ 8 տասնյակ արջ փրկել: Պարբերականը հավելում է, որ Հայաստանի կառավարությունը համաձայնել է աջակցել հիմնադրամին արջերի փրկության ծրագրի շրջանակում: «Չեն կարող շնորհակալություն չհայտնել Հայաստանի կառավարությանը՝ հատկապես Բնապահպանության նախարարությանը, որոնց օգնությամբ հնարավոր եղավ իրագործել փրկության ծրագիրը», -ասել է հիմնադրամի գլխավոր գործադիր տնօրեն Ալան Նայթը:

Պարզաբանում է Բանադաշտության շեղեկասվության և հասարակության հետ կապերի վարչության ղեկավար Արմեն Վարդանյանը

Մինչև օրս որևէ մեկը ղառասխանասվության ենթարկվել է անազատության մեջ դառնալու գործ արջերի համար

Արդեն քանի օր համացանցում և մամուլում քննարկվող Կովկասյան գորշ արջերի թեմային և դրա շուրջ «Daily Mail»-ի հրապարակմանը MAMUL.am-ն արդեն անդրադարձել է:

Բարձրացված աղմուկի վերաբերյալ պարզաբանում փորձեցինք ստանալ նաև ՀՀ բնապահպանության նախարարությունից: «Մամուլից տեղեկանալով ահազանգի մասին՝ համապատասխան տեղեկատվությունը փոխանցել ենք բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին:

շարունակությունը էջ 6 /



• Մինչև օրս որևէ մեկը ղաֆասախանասվության ենթարկվել է անազատության մեջ ղահվող գործ արջերի համար

Սկիզբը էջ 5 /

Տեսչական մարմինն այս պահին ուսումնասիրություններ է կատարում»,- մեր թղթակից հետ զրույցում ասաց նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչություն պետ Արմեն Վարդանյանը: Վերջինի խոսքով՝ անազատության, կիսաազատության մեջ պահվող վայրի կենդանիների խնդիրը նախարարության ուշադրության կենտրոնում է, այդ ուղղությամբ կատարվում են օրենսդրական փոփոխություններ: «Այս պահին ընթացքի մեջ են, մասնավորապես փոփոխություններ են կատարվում կենդանական աշխարհի մասին օրենքում, որով կանոնակարգվելու են կիսաազատ, անազատ պայմաններում ապրող վայրի կենդանիների կեցության պայմանները: Օրենսդրությամբ արգելված է վայրի կենդանիների պահումը անազատ կամ կիսաազատ պայմաններում: Կան բազմաթիվ կարմիրգրքյան կենդանիներ, որոնք ծնվում և ապրում են անազատության մեջ: Օրենսդրությամբ նույնիսկ կանոնակարգված է՝ արջերի համար ազատավանդակները պետք է լինեն 25 քառակուսի մետր տարածքով և 3 մետր բարձրությամբ: Միևնույն ժամանակ սեփականատերը պետք է ունենա կենդանու ծագման և առողջական վիճակի վերաբերյալ փաստաթղթեր: Ըստ էության, մենք դաշտն ենք կանոնակարգում: Օրենքի մեջ ուզում ենք ներառել, որ յուրաքանչյուր անազատության մեջ գտնվող կենդանի չի պավորվի, կենդանուն պահող սեփականատերը պարտավորվում է կենդանուն սնունդ ապահովել, տվյալ կեն-

դանուն բնորոշ միջավայր ստեղծել: Այնպես կարող է լինել, որ շատ սեփականատերեր չկարողանան ապահովել և հրաժարվեն վայրի կենդանիներ պահելուց»: Այս ամենի հետ մեկտեղ Արմեն Վարդանյանը նշում է, որ օրենքի պահանջները խախտելու դեպքում, լինում են նաև վարչական տույժեր: «Նախորդ տարի 2 դեպք ունեցել ենք: Վարչական տույժ են ենթարկվել, քանի որ արջի համար սահմանված պայմաններ չեն եղել: Մեկը Թալինի ճանապարհի հարևանությամբ տեղակայված արջի ապաստարանն էր: 100 հազար դրամ վարչական տուգանք է վճարել և պարտավորվել է արջի համար համապատասխան չափերի վանդակ կառուցել, ինչն արել է: Խնդիրը նախարարությանը մտահոգում է և այն պետք է լուծվի օրենսդրորեն, ինչի ուղղությամբ նախարարությունը քայլեր է ձեռնարկել: Օրենքի նախագիծը մշակված է, հիմա շրջանառության մեջ է գտնվում: Հասարակական կազմակերպությունների հետ ենք այդ օրենքը մշակել»: Հարցին՝ լինո՞ւմ են դեպքեր, երբ կենդանուն վերցնում են սեփականատիրոջ ձեռքից, Արմեն Վարդանյանը պատասխանեց, որ իրենք կենդանուն վերցնելուց հետո պահելու պայմաններ չունեն: Կենդանաբանական այգին չի ընդունում: Վերջում Արմեն Վարդանյանը նշեց, որ մոտ օրերս ծրագիր է մեկնարկվելու, որը լուծելու է Հայաստանում անազատ, կիսաազատ անօրինական պահվող գործ արջերի կեցության խնդիրները:

Մեկնարկել է «Դիլիջան ազգային ղարկ»-ում աղօրինի ծառահատում իրականացրած անձանց հայտնաբերման և ղաֆասախանասվության ենթարկելու գործընթացը



ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչությունում քննվող քրեական գործով ձեռնարկվում են մեծածավալ քննչական գործողություններ՝ պարզելու «Դիլիջան

ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության մի շարք պահաբաժիններում կատարված ապօրինի ծառահատումներին մասնակցություն ունեցած անձանց ինքնությունը, դերակատարության աստիճանը: Նախնական քննությամբ պարզվել է, որ մի խումբ անձինք տևական ժամանակ 2014-2017թթ., «Դիլիջան ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության պահաբաժիններում իրականացրել են ապօրինի ծառահատումներ՝ հատելով շուրջ 6330 հատ տարբեր տեսակի և տրամաչափի ծառ, որի հետևանքով պետությանը պատճառված վնասը գնահատվում է 1.010.092.250 դրամ: Խմբի անդամները, ըստ ստանձնած

դերակատարման հատել են ծառերը, դրանք դուրս բերել անտառից, պատրաստել վառելափայտ, շինանյութ և իրացրել: Քննությամբ պարզվել է «Հաղարծին տեղամասի» տարբեր պահաբաժիններում ծառահատումներ իրականացրած անձանցից մեկի ինքնությունը, ով խմբի կազմում ներգրավվել է 2016 թվականից եւ տեւական ժամանակ անմիջական մասնակցություն ունեցել ծառահատումներին:

Ձեռք բերված բավարար ապացույցների համակցությամբ՝ երիտասարդին մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասով, նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

Նախաքննությունը շարունակվում է, միջոցներ են ձեռնարկվում դեպքի բոլոր հանգամանքները, ենթադրյալ հանցագործություն կատարած անձանց շրջանակը պարզելու և նրանց գործողություններին համարժեք քրեաիրավական գնահատական տալու ուղղությամբ:

Պարզաբանում



« Armtimes.com » էլեկտրոնային կայքում հոկտեմբերի 27-ին և «Յայկական ժամանակ» օրաթերթում հոկտեմբերի 28-ին հրապարակված «Բնապահպանության տեսչությունը տեղյակ չէ, որ իր որոշումը չի կատարվում» վերտառությամբ հողվածի վերաբերյալ հայտնում ենք, որ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի հանձնարարությամբ ՀՀ Կոտայքի մարզի տարածքային ստորաբաժանման աշխատակիցները հոկտեմբերի 26-ին ստուգայց են կատարել «Արմոյլ» ՓԲԸ-ին պատկանող տարածք, կազմվել է համա-


պատասխան արձանագրություն, ըստ որի «Արմոյլ» ՓԲԸ կողմից գործարանի կառուցման շինարարական աշխատանքներ չեն իրականացվում, միևնույն ժամանակ պարզվել է, որ «Արմոյլ» ՓԲԸ-ին պատկանող տարածքում կատարվում են վարչական շենքի շինմոնտաժման և տարածքի պարսպապատման աշխատանքներ՝ առկա համապատասխան թույլտվությամբ: ՀՀ ԲՆ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը հետևողական է իր կողմից կայացված որոշումների կատարման հարցերում:

Բնապահպանական նորմերի դաժնանման խնդիրները համաճեղ աշխատանքի հիմն

ՀՀ ԲՆ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավար Ե.Տերտերյանն աշխատանքային այց է կատարել ՀՀ Վայոց ձորի մարզ:

Տեսչական մարմնի ղեկավարի և ՀՀ Վայոց ձորի մարզպետ Յ.Սարգսյանի հանդիպմանը հրավիրվել են նաև փոքր հէկ-երի, ընդերքօգտագործողների և մի շարք այլ տնտեսավարող սուբյեկտների ներկայացուցիչներ («Լիդիան Արմենիա», ԲԲԸ «Եղեգնաձոր» ՋՕԸ, «Ջերմուկ գրուպ» ՓԲԸ «Սյունյաց Վոթը» և այլն), ինչպես նաև Տեսչական մարմնի տարածքային ստորաբաժանումների աշխատակիցները:

Հանդիպման ընթացքում քննարկվել են մարզում առկա բնապահպանական խնդիրները և դրանց լուծման վերաբերյալ պատկերացումները, մասնավորապես՝ փոքր հէկ-երի շահագործման, բնապահպանական ռիսկերի նվազեցման, աղբավայրերի, «Ամուլսարի» մետաղական հանքավայրի շահագործման հետևանքով ենթադրվող բնապահպանական ռիսկերի գնահատման, ինչպես նաև մարզի կենդանական աշխարհի բազմազանությամբ և գրավչությամբ պայմանավորված որսագողության դեմ պայքարին ուղղված միջոցառումների արդյունավետության բարձրացման, ՀՀ Կարմիր գրքում գրանցված կովկասյան ընձառյուծի, բեզդարյան այծի, հայկական մուֆլոնի և այլ վտանգված տեսակների պահպանության, որոշ համայնքներում գորշ արջերի և գայլերի հարձակումների արդյունքում բնակչությանը պատճառված վնասները և մի շարք այլ հարցեր: Մարզպետը շնորհա-



վորել է նոր Տեսչական մարմնի ստեղծման կապակցությամբ և պատրաստակամություն հայտնել իր աջակցությունը ցուցաբերել մարզում բնապահպանական խնդիրների հայտնաբերման, բարձրաձայնման և լուծման գործում: Տեսչական մարմնի ղեկավար Ե.Տերտերյանն իր խոսքում նշել է, որ կարևորում է փոխհամագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների հետ և ընդգծել տնտեսավարող սուբյեկտների խնդիրներին տեղում ծանոթանալու, օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառների վերհանման առաջնահերթությունը: Կողմերը շնորհակալություն են հայտնել միմյանց արդյունավետ փոխգործակցության համար և պայմանավորվել, որ հանդիպումները կկրեն պարբերական բնույթ: Հանդիպման ավարտից հետո ՀՀ ԲՆ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավար Ե.Տերտերյանն այցելել ՀՀ Վայոց ձորի տարածքային բաժին, շրջայցի ընթացքում ծանոթացել աշխատանքային պայմաններին: Տեսչական մարմնի տարածքային բաժնի աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով աշխատակիցներին են փոխանցվել տեխնիկական միջոցներ և գույք:



Բերե՛ք բաժակ չնայե՛նք.

«Խոսրովի անտառի» հրդեհի լուրջագույն մասին

« Խոսրովի անտառի» հրդեհման պատճառների վերաբերյալ Բնապահպանության և Արտակարգ իրավիճակների նախարարությունների մոտեցումները տարբեր չեն եղել»: Այս մասին այսօր՝ նոյեմբերի 2-ին, Ազգային ժողովում լրագրողներին ասել է Բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը: «Ես ասել եմ և շարունակում եմ պնդել, որ տեղի ունեցածը բնական երեւույթի արդյունք չէ: Ես նկատի ունեմ, որ դա կայծակի կամ ամպրոպի հետեւանք չէ, այնպիսի բնական երեւույթի հետեւանք չէ, որը կարող էր առաջացնել հրդեհ: Չի բացառվում, որ տեղի ունեցածը կարող է մարդկային կամ տեխնածին լինել,- ասաց Մինասյանը: Դիտարկմանը, թե Աժ

նախարարը կարծում է, որ անփութությունն է եղել հրդեհի պատճառը, Արծվիկ Մինասյանն այսպես արձագանքեց. «Քրեական գործը հարուցված է, ընթացքի մեջ է: Այդ հարցերի պատասխանը հստակ կտա քննությունը»: Մինասյանն ասաց, որ ԱԻ նախարար Դավիթ Տոնոյանի հետ իրենք հրաշալի աշխատում են եւ պետք չէ փորձել տարածայնություններ փնտրել երկու զերատեսչությունների ղեկավարների միջև: «Եզրակացությունը, պատճառահետեւանքային կապը քննության արդյունքները ցույց կտան: Բերե՛ք բաժակ չնայե՛նք: Դուք հարցեր եք տալիս, որոնք այսօր նախաքննական մարմնի կողմից որպես վարկածներ կարող են քննվել»:

«Խոսրովի անտառ. ահագանգ և վերածնունդ»

Հայաստանի նկարիչների միությունում նոյեմբերի 14-ին կբացվի խորագրով ցուցահանդեսը 2017թ. նոյեմբերի 14-ին ժամը 15:00-ին «Բնապահպանությունը կերպարվեստի լեզվով» նախագծի շրջանակներում Հայաստանի նկարիչների միությունում կբացվի «Խոսրովի անտառ. ահագանգ և վերածնունդ» խորագիրը կրող ցուցահանդեսը: Թեմատիկ աշխատանքներ ներկայացնելու համար կարող եք դիմել Հայաստանի նկարիչների միություն (2-րդ հարկ, նոյեմբերի 7-ից 12-ը ներառյալ):




ՀՀ Բնապահպանության նախարարության ենթակայությամբ գործող Հայաստանի բնության պետական թանգարանում Հոկտեմբերի 28-ին տեղի է ունեցել «Իմ մուսան բնությունն է» խորագրով ցուցահանդեսի բացումը:

Ցուցահանդեսի հեղինակ Մալաթիա-Սերաստիա համայնքի «Մալաթիա հայրողաց տան» սան ութնամյա Մանվել Շալջյանը ցուցադրել է պլաստիլինից և կավից պատրաստած իր աշխատանքները, որոնցում ներկայացված էր Հայաստանի հարուստ կենսաբազմազանությունը: Ցուցադրված կենդանիների կերպարներն իրենց վառ գույներով ներկաների համար առավել պատկերավոր դարձրին Հայաստանի կենդանական աշխարհը:

Իր ելույթում Սմբատ Մկրտչյանը ներկայացրել է իր սանի՝ Մանվելի ստեղծագործական կարողություններն ու աշխատանքներում ներկայացված Հայաստանի բնության մասին նրա պատկերացումները: Միջոցառման ավարտին Հայաստանի բնության պետական թանգարանի տնօրեն Գայանե Ղազարյանը Մանվել Շալջյանին պարգևատրվել է շնորհակալագրով:

Բնության կենսաբազմազանությունը Մանվել Մալաջյանի լուսանկարների աշխատանքներում



«Չանգեզուր» կենսոլորտային համալիրում սկսված հրդեհը արագ չեզոքացվել է



Նկատելի է 25-ին ժամը 16-ի սահմաններում «Չանգեզուր» կենսոլորտային համալիրի «Չանգեզուր» տեղամասում տեսուչները հրդեհի օջախ են հայտնաբերել: Վերջիններս հրդեհի մասին տեղեկացրել են ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայությանը և սկսել հրդեհաշիջման աշխատանքները: Նախնական տվյալներով, կրակը տարածվել է շուրջ 8 հա տարածքով: Հրդեհաշիջման աշխատանքներին մասնակցում են «Չանգեզուր» տեղամասի և կենսոլորտային համալիրի այլ տեղամասերից օգնության եկած տեսուչները, ՀՀ ԱԻՆ Քաջարանի տարածքային ստորաբաժանման հրշեջները: Կրակի հիմնական օջախները մարված են, հրդեհը տեղայնացվել է, մասնակի կրակի տարածում կա դեպի խոտածածկ լեռնային հատվածներ, ինչը կթուլացնի կրակի առաջխաղացումը: Տեղամասում շարունակում են աշխատել տեսուչներն ու հրշեջները: Հատուկ պահպանվող տարածքում շարունակվում է իրականացվել շուրջօրյա հերթապահություն:

Տավուշի մարզի Ներքին Կարմիրաղբյուր գյուղի բնակիչ, ՀՀ ՁՈՒ ռազմական ոստիկանության աշխատակից Արթուր Առաքելյանը հոկտեմբերի 25-ին զանգահարել է ՀՀ բնապահպանության նախարարություն և տեղեկացրել, որ սարամասում հայտնաբերել է սպիտակազլուխ անգղ` տկար վիճակում, թռչելու անընդունակ: Նա նաև հայտնել է, որ անգղը տեղափոխել է իր բնակարան և խնդրել միջոցներ ձեռնարկել կարմիրաղբյուր թռչունին օգնություն ցուցաբերելու համար: ՀՀ բնապահպանության նախարար Ա. Մինասյանը հեռախոսազրույց է ունեցել ՀՀ ՁՈՒ ռազմական ոստիկանության Տավուշի բաժնի պետ Ա. Ղազարյանի հետ, տեղեկացել անգղի վիճակի մասին և քննարկել տեղափոխման հարցերը:

ՀՀ բնապահպանության նախարարությունից ահազանգը փոխանցվել է Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին: Տեսչական մարմնի ղեկավար Ե.Տերտերյանը հանձնարարել է մարմնի Տավուշի տարածքային բաժնի պետին ապահովել անգղի տեղափոխումը Երևանի կենդանաբանական այգի` անհրաժեշտ անասնաբուժական օգնություն ցուցաբերելու նպատակով: Տավուշի տարածքային բաժնի պետը և ՀՀ ՁՈՒ ՌՈՒ աշխատակիցները, կատարելով Կենդանաբանական այգու աշխատակիցների մասնագիտական ցուցումները, սպիտակազլուխ անգղին տեղափոխել են Երևանի կենդանաբանական այգի, կենդանիների բուժապասարկման կենտրոն: Մասնագետները, որոնց թվում է եղել նաև Ֆինլանդիայից ՀՀ ժամանած կենդանաբույժը, նախնական զննում են իրականացրել: Ցավազրկող ներարկումից հետո իրականացվել է նաև ռենտգեն հետազոտություն: Թռչնի զննության, այդ թվում Ռենտգեն ախտորոշման արդյունքում պարզվել է, որ թռչունն ունի այդ թևի կոտրվածքներ, այդ վիճակում գտնվել է մոտ 20 օր, ինչը դարձել է հյուսվածության պատճառ: Նախնական դիտարկումներով անգղի մոտ հրազենային վնասվածքներ առկա չեն:

Սոխակազլուխ անգղը արժանացավ մարդկանց և ՊԵՏՐՈՒՅԱՆ ՀՈԳԱՏԱՐ ԾՆՈՒՄԸ

Անգղի վիճակի մասին լիարժեք եզրակացություն հնարավոր կլինի տալ վերականգնողական գործընթացի ընթացքում: Այս պահին թռչնի առողջական վիճակում նկատվում է դրական տեղաշարժ, սակայն մասնագետների փոխանցմամբ նման կոտրվածքների դեպքում թռչելու հավանականությունը զրոյական է:



Նախագիծը` Արծրուն Պետանյանի
խմբագիր` Մանվել Սևրջյան
Ձևավորումը` Նարինե Բաղդասարյանի
Նյութերը` ՀՀ ԲՆ Տեղեկատվության և հասարակության հետ կապերի վարչության

Հեռախոս`
011 818 517